Դատական Գործ N: ՎԴ/1437/05/10

Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:	28-04-2010
Հայցվոր/դիմող	
Անուն:	Ցուրտավ ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Հայկ Կոշեցյան
Հասցե:	Հալաբյան 29-19
Պատասխանող	
Անուն:	ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն
Հասցե:	Կառավաական շենք 3
Ինքնուրույն պահանջ ներկայացնող:	
3-րդ անձ	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Պահանջ:	վարչական ակտը վերացնլու պ/մ
Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:	1.1
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Լրացուցիչ պահանջի վիճակագրության տողի համարը:	

Ամսաթիվ:	29-04-2010
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Վարչական
Դատավորի անուն:	Աշոտ Սարգսյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Վարչական
Դատավորի անուն:	
Այլ նշումներ:	

Ամսաթիվ:	06-05-2010
Որոշման հիմքը	
Հոդված	ՀՀ վարչ. դատ օր-ի 76-րդ հ. 2-րդ կետ, 78-րդ հ., ՀՀ քաղ. դատ. օր-ի 144-րդ հ.
Հայցադիմումի վերադարձման որոշման ամսաթիվ:	
Ելքի համար:	
Այլ նշումեր:	

Ամսաթիվ:	10-05-2010
Ելքի համարը:	23856/10
Ներկայացման ամսաթիվ:	21-05-2010
Որոշման ամսաթիվ:	26-05-2010
Դատաքննության ամսաթիվ:	30-08-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	23-06-2010
Այլ նշումներ:	Նախնական դատական նիստ
Ժամ:	11:45
Նիստերի դահլիճի համար:	316
Դատաքննության ամսաթիվ:	18-09-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	30-08-2010
Այլ նշումներ:	Նախնական դատական նիստ
Ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համար:	316
Հայցի լուծման ամսաթիվ:	05-10-2010
Հայցի լուծումը:	Մերժվել է
Հոդված	
Հոդված	112-115
Հակընդդեմ հայցի լուծումը :	
Հակընդդեմ հայցի լուծման ամսաթիվ:	
Այլ նշումներ:	
Դատական ակտ:	Վարչական գործ թիվ ՎԴ/1437/05/10 Վ Ճ Ի Ռ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 05.10.2010թ. ք. Երևան Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը հետևյալ կազմով՝ Նախագահող դատավոր Ա. Սարգսյան, քարտուղարությամբ՝ Գ. Տոքելյանի, մասնակցությամբ՝ հայցվոր «Ցուրտավ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ այկ Կոշեցյանի, պատասխանող ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության (ներկայացուցիչ Ա.Աբգարյանի),

դռնբաց դատական նիստում քննելով վարչական գործն ըստ հայցի «Ցուրտավ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Հայկ Կոշեցյանի ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդի 24.03.2010թ. թիվ 106/10 որոշումը վերացնելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.
«Ցուրտավ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Հայկ Կոշեցյանը հայցադիմում է ներկայացրել ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդի 24.03.2010թ. թիվ 106/10 որոշումը վերացնելու պահանջի մասին, որը ՀՀ վարչական դատարանի որոշմամբ ընդունվել է վարույթ, այնուհետև նշանակվել է քննության:

Հայցվորի իրավական դիրքորոշումը.
Հայցադիմումով և դատաքննությամբ հայցվորը հայտնել է, որ ՀՀ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 06.11.2009թ. վճռով «Ցուրտավ» ՍՊԸ-ն ճանաչվել է սնանկ, և նույն դատարանի 23.11.2009թ. որոշմամբ Հայկ Կոշեցյանը նշանակվել է ընկերության սնանկության գործով կառավարիչ: ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդի 09.03.2010թ. ծանուցագրից տեղեկացել են, որ արտոնագրային հավատարմատար Ռ.Մանասերյանը «Լոմիսի» ԲԲԸ-ի անունից դիմում-բողոք է ներկայացրել՝ «ՆԱՏԱԽՏԱՐԻ» N 11382 ապրանքային նշանի գրանցման գործողությունը անվավեր ճանաչելու մասին, որը խորհրդի կողմից ընդունվել է վարույթ և դրա քննարկումը նշանակվել է 24.03.2010թ., ժամը 15:00-ին:
16.03.2010թ. թիվ 001 գրությամբ պատասխանողին տեղեկացրել են, որ առկա է սնանկ ճանաչելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռ, ուստի արգելվում է ընկերությանը վարչական վարույթի շրջանակներում պատասխանող ներգրավել: Վարչական վարույթի քննարկման արդյունքում խորհուրդը ընդունել է 24.03.2010թ. թիվ 106/10 որոշումը, որով բավարարվել է «Լոմիսի» ԲԲԸ-ի բողոքը և «ՆԱՏԱԽՏԱՐԻ» բառային ապրանքային նշանի գրանցումն ամբողջությամբ ճանաչվել է անվավեր:
Որպես հայցի իրավական հիմք՝ հայցվոր կողմը վկայակոչել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը, 39-րդ հոդվածի 2-րդ մասի «ա», «բ» և «գ» կետերը, 47-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-1717 քաղաքացիական գործով 12.12.2007թ. կայացված որոշումը:
Վերոգրյալի հիման վրա հայցվոր կողմը խնդրել է հայցը բավարարել:
Պատասխանողի իրավական դիրքորոշումը.
Պատասխանողը հայցադիմումի պատասխանով և դատաքննությամբ առարկել է հայցի դեմ՝ նշելով, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը, «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգով սահմանված կարգով քննարկելով «Լոմիսի» ԲԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը, պարզել է, որ «ՆԱՏԱԽՏԱՐԻ» ապրանքային նշանը գրանցվել է «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի «ա» և «բ»

	կետերի խախտմամբ, քանի որ սպառողների մոտ տպավորություն է ստեղծվում, որ այդ ապրանքային նշանով մակնշված արտադրանքը արտադրվել է Վրաստանի Հանրապետությունում և մոլորության մեջ է գցում հայ սպառողին արտադրության վայրի հարցում, որպիսի պարագայում գործում է նույն օրենքի 28-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետը: Ընկերությանը վարչական վարույթի շրջանակներում պատասխանող ներգրավելու արգելքի առնչությամբ պատասխանողը նշել է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ կետը այս դեպքում չի գործում, քանի որ կատարվել է սխալ պետական գրանցում և տվյալ դեպքում ոչ նյութական ակտիվ հանդիսացող ապրանքային նշանի գրանցման անվավերությունը չի կարող գույքային պարտավորություններ առաջացնել ընկերության համար: Բացի այդ, Լոմիսի ԲԲԸ-ն չի հանդիսանում նաև պարտատեր ընկերություն: «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «ա», «բ» և «գ» կետերը և ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-1717 քաղաքացիական գործով 12.12.2007թ. կայացված որոշումը տվյալ գործով կիրառելի չեն, քանի որ վերաբերում են դատական գործընթացին, պարտատերերի պահանջների բավարարմանը, ինչպես նաև գույքային պարտավորությունների առաջացման դեպքերին, իսկ վիճարկվող որոշմամբ գույքային պարտավորություն չի սահմանվել և չի առաջանում, վարչական ակտը վարչական կարգով վիճարկելը դատական գործընթաց և քաղաքացիական գործ չի հանդիսանում, վիճարկվող որոշմամբ պարտատերերի պահանջ չի բավարարվել: Վերոգրյալի հիման վրա պատասխանողը խնդրել է հայցը մերժել: Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը. ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության կողմից 01.02.2007թ. «Ցուրտավ» ՍՊԸ-ի անվամբ կատարվել է «ՆԱՏԱԽՏԱՐԻ» ապրանքային նշանի գրանցում՝ 11382 գրանցման հերթական համարով: Արտոնագրային հավատարմատար Ռ.Մանասերյանը «Լոմիսի» ԲԲԸ-ի անունից դիմում է ներկայացրել ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդի նախագահին՝ «Ցուրտավ» ՍՊԸ-ի անվամբ կատարված «ՆԱՏԱԽՏԱՐԻ» ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու խնդրանքով: ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը, 24.03.2010թ. քննելով վերը նշված դիմումը, թիվ 106/10 որոշմամբ բավարարել է այն և անվավեր ճանաչել «Ցուրտավ» ՍՊԸ-ի անվամբ կատարված «ՆԱՏԱԽՏԱՐԻ» ապրանքային նշանի գրանցումը: Վարչական դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները. Լսելով կողմերի բացատրությունները, դատարանը ներկայացված գրավոր ապացույցների բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ եզրակացրեց, որ հայցը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ վարչական ակտերի ձևերի, դրանց ընդունման, հրապարակման կամ հրատարակման, ուժի մեջ մտնելու, փոփոխման, անվավեր ճանաչելու, գործողությունը դադարեցնելու, ինչպես նաև այդ ակտերի հասցեատերերին իրազեկելու հետ կապված հարաբերությունների կարգավորման առանձնահատկությունները սահմանվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածը սահմանում

	է. «Սույն օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (այսուհետ՝ անձինք) միջև ծագած հարաբերությունները:»: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունների իմաստային կիրառությունը: Այսպես. 1) վարչական մարմիններ՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններ՝ ա) Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմիններ՝ Հայաստանի Հանրապետության նախարարություններ և Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմիններ. բ) տարածքային կառավարման մարմիններ՝ մարզպետներ. գ) տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ավագանի և համայնքի ղեկավար, քաղաքապետ՝ քաղաքային համայնքում, գյուղապետ՝ գյուղական համայնքում: Եթե վերը թվարկված մարմիններից բացի, վարչարարություն են իրականացնում պետական այլ մարմիններ, ապա սույն օրենքի իմաստով՝ դրանք նույնպես համարվում են վարչական մարմիններ. 2) վարչարարություն՝ վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն[a] վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է վարչական ակտերի տեսակները, ի թիվս որոնց «բ» կետով նախատեսված է նաև միջամտող վարչական ակտը, որն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմինները մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն են դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը: Տվյալ պարագայում ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը, հանդիսանալով վարչական մարմին և իրականացնելով վարչարարություն, կայացրել է միջամտող վարչական ակտ՝ 24.03.2010թ. թիվ 106/10 որոշումը, որով անվավեր է ճանաչվել «Ցուրտավ» ՍՊԸ-ի անվամբ կատարված «ՆԱՏԱԽՏԱՐԻ» ապրանքային նշանի գրանցումը: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և ՀՀ միջազգային պայմանագրերով: Ապրանքային նշանների գրանցման, իրավական պահպանության և օգտագործման հետ կապված հարաբերությունները, որպես առանձին տեսակի վարչական վարույթ, իրավահարաբերության

ծագման պահին կարգավորվել են «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքով (հոդված 1) :
«Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը սահմանել է ապրանքային նշանի գրանցման մերժելու բացարձակ հիմքերը, ի թիվս որոնց, տեղ են գտել նաև այն դեպքերը, երբ նշանները չունեն տարբերակող հատկություն կամ բաղկացած են միայն այնպիսի տարրերից, որոնք՝
- համընդհանուր օգտագործման մեջ են մտել որպես որոշակի տեսակի ապրանքներ բնորոշող նշաններ (մաս 1, կետ «ա»).
- համընդհանուր ճանաչում ստացած խորհրդանիշներ և տերմիններ են (մաս 1, կետ «բ»):
Իսկ «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ ապրանքային նշանի գրանցումը կամ նշանի միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում իրավական պահպանության տրամադրումը կարող է վիճարկվել և ճանաչվել անվավեր ամբողջովին կամ մասնակիորեն՝ իրավական պահպանության ամբողջ ժամկետի ընթացքում, եթե այն տրամադրվել է սույն օրենքի 11 հոդվածով սահմանված պահանջների խախտմամբ:
ՀՀ էկոնոմիկայի նախարարի 25.03.2009թ. թիվ 208-Ն հրամանով հաստատված ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդի կանոնադրության 5-րդ կետը սահմանում է խորհրդի գործառույթները: Մասնավորապես՝ բողոքարկման խորհուրդն իր խնդիրների իրականացման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է վարչական բողոքների քննարկումը (ենթակետ 9):
ՀՀ էկոնոմիկային նախարարի 25.03.2009թ. թիվ 209-Ն հրամանով հաստատված ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի 76 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրելու դեմ բողոքի քննարկման արդյունքում կարող է ընդունվել բողոքը բավարարելու և ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու մասին որոշում:
Վերը շարադրված իրավական նորմերի և փաստական հանգամանքների համադրմամբ վարչական դատարանը արձանագրում է, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը իր իրավասությունների շրջանակներում քննել է «Լոմիսի» ԲԲԸ-ի անունից ներկայացված դիմումը (վարչական բողոք) և կայացրել է ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու մասին որոշում, որը նախատեսված է ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգով: Նման որոշում կայացնելիս խորհուրդը հիմնավորել է, որ տվյալ ապրանքային նշանը («ՆԱՏԱԽՏԱՐԻ») չունի տարբերակող հատկություն կամ բաղկացած է միայն այնպիսի տարրերից, որոնք՝
- համընդհանուր օգտագործման մեջ են մտել որպես որոշակի տեսակի ապրանքներ բնորոշող նշաններ.
- համընդհանուր ճանաչում ստացած խորհրդանիշներ և տերմիններ են:
Դատարանը հարկ է համարում փաստել, որ հայցվոր կողմը նշված հանգամանքը չի վիճարկում: Հայցվոր կողմը ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդի 24.03.2010թ. թիվ 106/10 որոշումը վիճարկում է այն տեսանկյունից, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտապանին

սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից՝
ա) արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի կողմից իր ցանկացած պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալը.
բ) արգելվում է պարտապանի համար գույքային պարտավորություն առաջացնող որևէ քաղաքացիական կամ վարչական գործի վարույթի սկսումը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ՝ պարտապանի մասով.
գ) կարճվում է սնանկության վարույթին առնչվող կամ դրա ընթացքի վրա ազդող պարտապանի համար գույքային պարտավորություն առաջացնող այն քաղաքացիական գործի վարույթը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ՝ պարտապանի մասով:
Մինչդեռ հայցվորը հաշվի չի առել այն հանգամանքը, որ վերը նշված դեպքերից առաջինը վերաբերում է պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալու հետ կապված հարաբերություններին, իսկ մյուս երկու դեպքերը տարածվում են բացառապես դատավարական հարաբերությունների վրա: Նման պայմաններում, երբ տվյալ վեճից ծագած հարաբերությունները ո՛չ առաջինն են և ո՛չ էլ երկրորդը, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասը սույն գործով կիրառելի չէ:
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝
ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.
բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում»:

Այսպիսով, վարչական դատարանը գտնում է, որ բացակայում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդի 24.03.2010թ. թիվ 106/10 որոշումն անվավեր ճանաչելու որևէ հիմք, հետևաբար հայցն անհիմն է և մերժման ենթակա:
Պետական տուրքի հարցին անդրադառնալիս դատարանը, հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածը, որի համաձայն՝ պետական տուրքի վճարումից ազատելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «է» կետը, որը պետական տուրքի վճարումից ազատում է հայցվորներին՝ օրենքով նախատեսված դեպքերում այլ անձանց՝ օրենքով պաշտպանվող իրավունքների և շահերի պաշտպանության հարցերով դատարան տրվող դիմումների գծով, եզրակացրեց, որ հայց ներկայացնելու համար պետական տուրքի վճարման հարցը պետք է համարել լուծված:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ, 112-115-րդ և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով, դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«Ցուրտավ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Հայկ Կոշեցյանի հայցն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության

	մտավոր սեփականության գործակալության՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդի 24.03.2010թ. թիվ 106/10 որոշումը վերացնելու պահանջի մասին, մերժել: Պետական տուրքի հարցը համարել լուծված: Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով՝ ՀՀ վճռաբեկ դատարանին: Օրինական ուժի մեջ մտնելուց հետո վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով[a] պարտապանի հաշվին: ԴԱՏԱՎՈՐ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
Դատական ակտի ամսաթիվը:	05-10-2010
Ակտով հօգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ.:	00
Ամսաթիվ:	06-11-2010
Այլ նշումներ:	
Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:	01-12-2010
էջերի քանակը:	97
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	01-12-2010
էջերի քանակը:	97
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	

Փաստաթուղթը տպվել է www.datalex.am պորտալի կողմից 20 Մայիս 2011